«Ասպետ» ռազմամարզական ճամբար

Ըստ նախնական պայմանավորվածության խումբը կազմում է 60 սովորող: Ղեկավարների ընտրության հարցը դեռ հստակեցման կարիք ունի:

Այս շաբաթվա ընթացքում կունենանք երկու այց մարզային գործընկեր դպրոցներ՝ հստակեցնելու համար այդ դպրոցների մասնակցությունը, իսկ մասնակցության դեպքում ներառվածության աստիճանն այս ճամբարին: Գործընկեր դպրոցների զրոյական մասնակցության պարագայում, կարծում եմ, հնարավոր է վերոնշյալ թվով սովորողներ ապահովել կրթահամալիրից, առավել ևս, որ կան շրջանավարտներ, ովքեր հայտնել են ցանկություն ևս մեկ անգամ մասնակցելու ճամբարի աշխատանքներին: Արցախյան կողմի հետ ժամկետները հստակեցնելուց հետո միայն կարելի է բուռն թափով շարունակել նախապատրաստական աշխատանքները. արդեն այս պահին սովորողների հետ համաձայնեցնելու աշխատանքն է արվում: Նախապատրաստական աշխատանքների վերջին շաբաթը պետք է ներառի ֆիզիկական և առողջական վիճակի ստուգում (այս առումով արդեն բավականին փորձ ունենք կուտակած նախորդ տարվանից) և շարային նվազագույն պատրաստվածություն (կարող են կազմակերպել էմանուել Ագջոյանը կամ Դավիթ Կարապետյանը): Հարկավոր է հստակեցնել նաև Կրթահամալիրի մյուս ավագ դպրոցների կազմակերպչական աշխատանքների պատասխանատուներին: Կկիրառվի նաև նախորդ տարվա փորձը՝ մինչ մեկնումը քայլարշավներ կազմակերպելու առումով:

Հիշեցում
Հոկտեմբեր ամսին, ԼՂ Գանձասարյան ճամբարի, Ակումբային հավաքի բավականին հաջողված ամփոփման ժամանակ, ԼՂ ԿԳՆ պարոն Ասիրյանցը մեզ տրամադրեց ուղեգրեր, որոնք վերաբերվում են Գանձասարյան ամենամյա ամառային ճամբարին: Այն կազմակերպում է ԼՂ ԿԳՆ-ն: Ուղեգրերի քանակը հետևյալն էր. երեք հերթափոխ, յուրաքանչյուր հերթափոխին տաս սովորող և մեկ ղեկավար: Բացառությամբ տեղափոխման ծախսերից, մնացած մասը հոգում է արցախյան կողմը: Կարծում եմ ժամանակն է նաև անդրադառնալ այս կետին:

Վահրամ Թոքմաջյան